



20 հոկտեմբերի, 2010թ.

Ե-1779

**ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ ՊԱՐՈՆ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ**

Հարգելի պարոն Գրիգորյան,

Հարկ է նշել, որ Հանրապետության օրենսդիր և գործադիր իշխանությունների պաշտոնատար անձինք լուրջ ուշադրություն չեն դարձնում քաղաքացիական հասարակության ժողովրդավարական զարգացմանը նպաստող օրենսդրական և դաշտի ձևավորման հարցերին:

Պետական համապատասխան կառույցների հաճախակի փորձերը՝ հայրենական օրենսդրությունը լրացնել բազմաբնույթ հասարակական շարժումը կանոնակարգող նորմատիվ ակտերով, սովորաբար կիսատ-պոստ բնույթ են կրում: «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի քննարկվող նախագիծն արժանանում է նույն ճակատագրին, ինչպես մյուս օրենսդրական ակտերի նախագծերը, որոնք առաջին հերթին ուղղված են միայն վարչական մարմինների գործառնությունների ավելացմանը:

Տարակուսանք է հարուցում նաև այն փաստը, որ մի շարք նախարարություններ (մասնավորապես ՀՀ Մփյուռքի, Սպորտի և երիտասարդության հարցերի, Ֆինանսների նախարարությունները), ինչպես նաև ՀՀ մարդու իրավունքների պաշտպանը, որոնք իրենց գործունեությամբ անմիջականորեն պետք է առնչվեն **կամավորության, մեկենասության և բարեգործության** երևույթների ու նրանց իրավունքների պաշտպանության հետ, չգիտես թե ինչու սույն օրինագծին ծանոթանալուց հետո որևէ դիտողություն կամ առաջարկություն չեն ներկայացրել: Սա կարելի է բացատրել վերոնշյալ երևույթների հանդեպ մի շարք նախարարությունների ու ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անտարբերության ու հանրային նշանակություն ունեցող հարցերին շատ մակերեսային վերաբերմունքով:

Այսպիսով, սույն գրությունը չճանրաբեռնելու նպատակով, <Կամավոր աշխատանքի մասին> ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ մեր կազմակերպության դիտողություններն ու առաջարկությունները ներկայացնում ենք հավելվածի տեսքով: Միայն անհրաժեշտ ենք համարում նշել, որ սույն օրենքի նախագիծն ունի բազում թերություններ, հետևապես գտնում ենք, որ սույն նախագիծն այս տեսքով /բովանդակությամբ/ անընդունելի է և լուրջ լրամշակման կարիք ունի:

Կից ներկայացվում է՝ Մեր կազմակերպության դիտողություններն ու առաջարկությունները:

Հարգանքով՝

ԼԵՎՈՆ ՆԵՐՍԻՍՅԱՆ
Տնօրեն

Դիտողություններ և առաջարկություններ «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագծի վերաբերյալ

| «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի նախագիծ | Դիտողություններ և առաջարկություններ |
|---|---|
| <p>Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ</p> <p>Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան</p> <p>1. Սույն օրենքը կարգավորում է կամավոր աշխատանք իրականացնելու հետ կապված հարաբերությունները, սահմանում է կամավոր աշխատանքի ոլորտները, իրականացման իրավական հիմքերը:</p> <p>2. Սույն օրենքի գործողությունը չի տարածվում կուսակցությունների, առևտրային և կրոնական կազմակերպությունների օգտին և/կամ նրանց նախաձեռնությամբ, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության օգտին իրականացվող կամավոր աշխատանքի վրա:</p> | <p>Քննարկվող օրինագծում բացակայում են սույն հասարակական հարաբերության սուբյեկտների և օբյեկտների բազմաբնույթ հասկացությունները, իսկ նշված հարաբերության հիմքում անմիջականորեն ընդունվում է միայն մեկ սուբյեկտի՝ «կամավորի աշխատանք» գործողությունը:</p> <p>Պետք է հիմնավորել նաև սույն Օրենքի ընդունման անհրաժեշտությունն ու Օրենքում օգտագործվող տերմինների /հասկացությունների/ սահմանումը:</p> <p>Օրինակ՝</p> <ul style="list-style-type: none"> • Կամավորություն • Կամավոր հիմունքներով • Կամավոր աշխատանք • Մեկենասություն • Բարեգործություն • Շահառու • Կամավորներին ընդունող կազմակերպություն • Եվ այլ հասկացություններ <p>Սույն Օրենքը պետք է կանոնակարգի ոչ թե կամավոր աշխատանքի հետ կապված փոխհարաբերությունները, այլև պետք է հիմնվի այնպիսի հասկացությունների վրա, ինչպիսիք են.</p> <ul style="list-style-type: none"> • Ալտրուիզմ/Այլասիրություն • Անշահախնդրություն • Բարեգործություն • Հումանիզմ • Գթասրտություն • Բարոյականություն • Կարեկցանք • Եվ այլն <p>Եթե կրոնական կազմակերպությունը՝ կամավորների օգնությամբ զանգվածային աշխատանքներ է տանում բնակչության բարոյահոգեբանական մակարդակի բարձրացման ուղղությամբ, ապա ինչո՞ւ նման աշխատանքը չի կարող համարվել կամավոր աշխատանք: Ուրեմն, անհրաժեշտ է հենվել ոչ թե կազմակերպության, այլև, իրականացվող ծրագրի գաղափարախոսության վրա: «Օրենքի կարգավորման առարկան» հոդվածում անհրաժեշտ է նշել պետության դերի ու նշանակության մասին, պետության աջակցության, սույն օրենքի ընդունման անհրաժեշտության մասին: Սույն օրենքով պետությունը պետք է աջակցություն ցուցաբերի կամավորների կողմից պետության սոցիալ-հումանիտար խնդիրների լուծման, ինչպես նաև սոցիալապես անապահով քաղաքացիներին անհատույց հասարակական օգտակար աշխատանք կատարելու գործում: Սույն գլխում անհրաժեշտ էր հիմնավորել այն սկզբունքները, որոնց շնորհիվ իրականացվում է վերոնշյալ հասարակական հարաբերությունը (ալտրուիզմ, անշահախնդրություն, անհատույց աշխատանք,</p> |

| | |
|--|--|
| | <p>մարդասիրություն, գթասրտություն, կարեկցություն և այլն): <u>Սույն հասարակական երևույթի հիմքերը նշելով, պարզ կդառնա, որ պետությունը պետք է լիարժեքորեն խրախուսի քաղաքացիների մոտ վերոնշյալ որակները, այլ ոչ թե արգելոց նորմեր սահմանի:</u></p> |
| <p>Հոդված 2. Կամավոր աշխատանքի իրավական կարգավորումը</p> <p>1. Կամավոր աշխատանքը կարգավորվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով և այլ իրավական ակտերով:</p> <p>2. Կամավորների աշխատանքային հարաբերությունները կարգավորվում են Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսդրությամբ, եթե սույն օրենքով այդ հարաբերությունները կարգավորող առանձնահատկություններ սահմանված չեն:</p> | <p>Հարկ է նկատել, որ սույն օրենքի նախագիծը պետք է ներկայացվեր ՀՀ աշխատանքային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին ՀՀ օրենքի նախագծի փաթեթի հետ միասին, անցկացնել հանրային լուսմներ, մասսայական քննարկումներ: Այժմ բոլոր այն օրենքներում և նորմատիվ իրավական ակտերում, որտեղ հիշատակվում է կամավորների և կամավորական աշխատանքի մասին <i>/կամավորության, մեկենասության և բարեգործության/</i>, պետք է դրանցում լրացումներ և փոփոխություններ կատարել կամ սույն օրենքը համապատասխանեցնել տվյալ օրենքներին: Օրինակ՝ ՀՀ աշխատանքային օրենսգիրք, ՀՀ ընտրական օրենսգիրք, <Բարեգործության մասին>, <Հասարակական կազմակերպությունների մասին> և այլ օրենքներում և այլն:</p> <p>Կամավորների աշխատանքը մի քանի ասպեկտներ ունեն: Տվյալ դեպքում, այդ աշխատանքի բարոյական և այլ կողմերը /տարբեր կանոններ, օրինակ՝ վարվելակերպի և այլն/ չեն լուսաբանվում: Տվյալ դեպքում, բացի սույն օրենքը, անհրաժեշտ է ունենալ նաև “Կամավորի վարքագծի կանոնակարգը”, որը պետք է ընդունի կամ մշակի կամավորներ հավաքագրող կամ ընդունող կազմակերպությունը:</p> |
| <p>Հոդված 3. Կամավոր աշխատանքի հասկացությունը</p> <p>1. Կամավոր աշխատանքը կամավորների կողմից սույն օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված ոլորտներում պետության, հասարակության, ոչ առևտրային կազմակերպությունների կամ ֆիզիկական անձանց համար օգնություն ցուցաբերելու նպատակով կատարվող հանրօգուտ, առանց վարձատրության աշխատանքն է:</p> <p>2. Աշխատանքային հարաբերությունների մեջ գտնվող անձը կարող է ընդգրկվել կամավոր աշխատանքներում՝ գործատուի համաձայնությամբ կամ աշխատանքից ազատ ժամանակ:</p> <p>3. Կամավոր աշխատանք չի համարվում անձնական շահերի բավարարմանն ուղղված աշխատանքը:</p> <p>4. Եթե կամավոր աշխատանքի դիմաց տրվել է վարձատրություն, ապա այդ աշխատանքները դադարում են համարվել կամավոր, իսկ աշխատողները՝ կամավորներ:</p> | <p>«Կամավոր աշխատանք» հասկացություն հոդվածում կամ առհասարակ սույն օրենքում անհրաժեշտ է սահմանել նաև կամավոր աշխատանքի սկզբունքները.</p> <ul style="list-style-type: none"> • Պետության վերաբերմունքը կամավորությանը /պետություն-կամավորություն/ փոխհարաբերություն/, • Կամավոր աշխատանքի կանոնակարգման սկզբունքները, • Կամավորներ ներգրավող կազմակերպությունների վերաբերմունքը կամավոր գործունեության նկատմամբ, ինչպես նաև պետության վերաբերմունքն այդ կազմակերպությունների նկատմամբ, եթե այն պետական կառույց չէ, • Կամավորությունն ու կամավորական աշխատանքը աշխատանքային և սոցիալական օրենսդրության և այլ նորմերի տեսանկյունից: • Կամավորության և կամավոր աշխատանքի սկզբունքները (հիմքերը), • Գտնում ենք, որ սույն հոդվածի 4-րդ կետն ավելորդ է, քանի որ նախապես սահմանվում է, որ կամավոր աշխատանքն անվճար է իրականացվում /ըստ կամավորի հասկացությունից/: <p>Եթե հաշվի առնենք, որ մեկենասությունը, բարեգործությունը, բարերարությունը, ընդհանուր առմամբ նյութական և ֆինանսական միջոցների տրամադրումն է կարիքավորներին, ապա</p> |

| | |
|--|--|
| | <p>կամավորությունը՝ իր ազատ ժամանակի, այսինքն աշխատանքի կամ ծառայության տրամադրումն է: Մոցիալապես անապահով բնակչության սոցիալ-հումանիտար և բարոյահոգեբանական աջակցության ուղղված այնպիսի երևույթներում, ինչպիսիք են մեկենասությունը, բարեգործությունը և կամավորությունը, որպես հիմք անհրաժեշտ է ընդունել ոչ թե մատուցվող ծառայության ձևը, այլ դրանց բովանդակությունը:</p> |
| <p>Հոդված 4. Կամավոր աշխատանքի ոլորտները</p> <p>1. Կամավոր աշխատանքի ոլորտներն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) բնական և էկոլոգիական աղետների հետևանքների վերացման, այդ աղետների հետևանքով տուժած անձանց օգնությունը. 2) պետական մարմինների և տեղական ինքնակառավարման մարմինների ընտրությունների, հանրաքվեների ընթացքում դիտորդական առաքելությունը. 3) բարեգործական ճանաչված ծրագրերի շրջանակում կատարվող աշխատանքը. 4) քաղաքացիների առողջության պահպանմանը և հիվանդությունների կանխարգելմանն ուղղված աշխատանքները. 5) կրթությանը, մշակութային հուշարձանների պահպանությանն աջակցելը. 6) շրջակա միջավայրի և կենդանիների պաշտպանությանն ուղղված աշխատանքները. 7) կյանքի դժվարին իրավիճակում գտնվող ծեր և հաշմանդամ քաղաքացիների աջակցությանն ուղղված աշխատանքները: <p>2. Կամավոր աշխատանքի կատարումը առանձնապես ծանր կամ առանձնապես վտանգավոր պայմաններում և արտադրություններում արգելվում է:</p> | <p>Եթե թվարկվում են կամավոր աշխատանքի ոլորտներ, ապա սույն ցանկը անհրաժեշտ է լրացնել այնպիսի ոլորտներով, ինչպիսիք են</p> <ul style="list-style-type: none"> • Սպառողների իրավունքների պաշտպանություն, • Համագործակցություն զբաղվածության և պրոֆեսիոնալ կրթության մակարդակի բարձրացման նպատակով, • Մոցիալական ինտեգրացիա և վերաինտեգրացիա, • Հասարակական շահերի պաշտպանություն, • Մոցիալական համերաշխություն, • Պատմական և մշակութային հուշարձանների պաշտպանություն, • Բնակչության իրազեկում հասարակական նշանակալից երևույթների, դեպքերի, իրադարձությունների և այլնի մասին • Հասարակական շարժման կառույցների հզորացում, • Օգնություն փոքրամասնություններին (մարզինալ խմբերին) <p>Ամենակարևորը, անհրաժեշտ է սահմանել, թե որ աշխատանքներն են համարվում կամավոր (դրանք սահմանվում են ըստ ծավալի, տարածման տարածքի, շահառուների քանակի և այլ չափանիշների), սոցիալական, հումանիտար, կազմակերպչական, տեղեկատվական ծրագրերի և ավելի մասնավոր աշխատանքներ, ինչպիսիք են, օրինակ օգնություն կազմակերպություններին, որոնք կամավորներ են ներգրավում՝ իրենց ներկազմակերպչական աշխատանքներում: Հետևաբար, անհրաժեշտ է կամավոր աշխատանքը ամրակցել ոչ թե տնտեսվարող սուբյեկտին, այլև նախատեսվող աշխատանքների բնույթին: Այս պայմանները պետք է հաշվի առնվեն կամավորներ ներգրավող կազմակերպությունների իրավունքներում և պարտականություններում:</p> <p>Կամավորական աշխատանքը, մեկենասությունը և բարեգործությունը, առաջին հերթին անհրաժեշտ է քննարկել նախատեսվող աշխատանքների բնույթով և բովանդակությամբ: Գլխավորը կամավորական աշխատանքի ոլորտների սահմանումը չէ, այլ <u>մեկենասության, բարեգործության և կամավորական աշխատանքի տեսակները:</u></p> |
| <p>Հոդված 5. Կամավոր աշխատանքի սկզբունքները</p> <p>Կամավոր աշխատանքի սկզբունքներն են՝</p> <ol style="list-style-type: none"> 1) կամքի ազատությունը. 2) կամավոր աշխատանքի | <p>1. «Կամավորական աշխատանքի սկզբունքները» հոդվածում պետք է քննարկել ոչ միայն կամավորական շարժումը, այլև մեկենասությունը և կամավորությունը: <u>Պետությունը պետք է աջակցի մեկենասությանը, բարեգործությանը և կամավորությանը, և քանի որ</u></p> |

| | |
|---|--|
| <p>անհատուցելիությունը. 3) մարդասիրությունը:</p> | <p><u>հասարակության մեջ այս շարժումներն օգուտ են բերում ոչ միայն շահառուներին, այլև բարձրացնում են հասարակության բարոյահոգեբանական մակարդակը, որը պետք է համակողմանի աջակցության արժանանա պետության կողմից:</u></p> <p>2. Մեկենասությունը, բարեգործությունը /բարերարությունը/ և կամավորությունը հիմնվում են արտուրիզմի, անշահախնդրության, վեհանձնության, հրապարակայնության, հումանիզմի, կամավորության, օրինականության, գթասրտության, բարեսրտության, անձնագոհության, կարեկցանքի և մարդկայնության սկզբունքների վրա:</p> <p>3. Հարկ է նշել, որ ոչ ոք (ոչ իրավաբանական, ոչ էլ ֆիզիկական անձը) իրավունք չունի սահմանափակել մեկենասի կամ կամավորի՝ բարեգործության նպատակների, օբյեկտի ձևերի, տեսակների, բովանդակության և ծավալների ընտրության ազատությունը, եթե այն չի հակասում ՀՀ Մահմանադրությանը, գործող օրենսդրությանը և սույն Օրենքին:</p> <p>4. Անհրաժեշտ է մեկենասի, բարեգործի /բարերարի/ և կամավորի կարգավիճակը սահմանող մի գլուխ ներառել:</p> <p>5. Սուբյեկտների և կամավոր աշխատանք չհամարվող գործունեության տարբեր տեսակների թվարկման փոխարեն կարելի է նշել, որ ամեն ինչ, որ եկամուտ է ապահովում, կամավոր աշխատանք չի համարվում:</p> <p>6. Հետևաբար, դրույթն այն մասին, որ կամավորներ կարող է ընդունել միայն այն կազմակերպությունը, որի կանոնադրության մեջ նշված է գործունեության տվյալ տեսակը, արմատապես հակասում է կամավորության և մեկենասության հասկացություններին, քանի որ պետք է հաշվի առնել նաև մեր և հարևան պետությունների ոչ բարիդրացիական հարաբերություններն ու սփյուռքի առկայությունը:</p> <p>7. Բացի այդ, հարկավոր է հիշել նաև տարերային աղետների մասին, ուստի այս կետը պետք է վերաձևակերպել այնպես, որ ֆորս-մաժորային իրավիճակներում կամավորներ ընդունող կազմակերպությունների փոխարեն հանդես գա պետությունը՝ ի դեմս համապատասխան նախարարությունների և գերատեսչությունների: Այս կետում պետության մասին խոսք չկա, իսկ եթե կամավոր աշխատանք կիրառողը պետությունն է կամ տեղական ինքնակառավարման մարմինը, ապա նույնպես Օրենքում նշված չէ:</p> |
| <p>Գլուխ 2. Կամավոր աշխատանքի սուբյեկտները, նրանց իրավունքները և պարտականությունները</p> <p>Հոդված 6. Կամավոր աշխատանքի սուբյեկտները</p> <p>1. Կամավոր աշխատանքի սուբյեկտներն են կամավորները և կամավոր աշխատանք կիրառող կազմակերպությունները, որոնց միջև հարաբերությունները կարգավորվում են կամավոր աշխատանքի մասին</p> | <p>1) Անհրաժեշտ է 3-րդ կետից հանել և առանձին հոդվածով ներկայացնել ՀՀ տարածքում գործող օտարերկրյա կամավորների իրավունքներն ու պարտականությունները:</p> <p>2) Ինչո՞ւ պետք է կամավորությունը և կամավոր աշխատանքը թույլատրել միայն այն կազմակերպություններին (ոչ առևտրային), որոնց մոտ տվյալ աշխատանքը նշված է համապատասխան դրույթներում: Կրկի՞ն փորձում ենք վարչարարությամբ զբաղվել (սույն հոդվածի 4-րդ կետ)</p> <p>3) Քանի որ, ինչպես նշել եմ, ՀՀ-ը մի երկիր է, որը գտնվում</p> |

| | |
|---|--|
| <p>օրենսդրությամբ և կամավոր աշխատանքի պայմանագրով:</p> <p>2. Հայաստանի Հանրապետությունում կամավոր աշխատանքի կարող են ներգրավվել տասնվեց տարին լրացած անձինք: Կամավոր կարող են համարվել նաև ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի համաձայնությամբ կամավոր աշխատանք կատարող տասնչորսից մինչև տասնվեց տարեկան անձինք, որոնք կարող են ներգրավվել սույն օրենքի 4-րդ հոդվածի 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ կետերով նախատեսված աշխատանքներում:</p> <p>3. Օտարերկրյա պետություններում կամավոր աշխատանքի կարող են ընդգրկվել Հայաստանի Հանրապետությունում բնակվող տասնութ տարին լրացած անձինք:</p> <p>4. Կամավոր աշխատանք կիրառող կազմակերպություն (այսուհետ՝ կազմակերպություն) է այն ոչ առևտրային կազմակերպությունը, որը կազմակերպում, օգտագործում կամ նպատակաուղղում է կամավոր աշխատանքը, ինչը նախատեսված է կազմակերպության կանոնադրությամբ:</p> | <p>է պատերազմական վիճակում Ադրբեջանի հետ, լարված հարաբերությունների մեջ է Թուրքիայի հետ, ինչպես նաև ունի մեծ Սփյուռք, ապա պետք է հաշվի առնել մեր հայրենակիցների՝ իրենց պատմական Հայրենիքի պաշտպանության մասնակցության իրավունքը՝ կամավորի կարգավիճակով:</p> |
| <p>Հոդված 7. Կամավորների իրավունքները Կամավորներն ունեն հետևյալ իրավունքները՝</p> <p>1) կազմակերպությունից ստանալ տեղեկատվություն, կողմնորոշում և աջակցություն.</p> <p>2) իրենց կամավոր աշխատանքի իրականացման հետ կապված օրենսդրությամբ սահմանված գործուղման, ինչպես նաև այլ հիմնավորված ծախսերի փոխհատուցման.</p> <p>3) կամավոր աշխատանքի իրականացման ժամանակ վնասվածքներ ստանալու, կամ այդ աշխատանքի իրականացման ընթացքում հիվանդությունն ձեռք բերելու դեպքում բժշկական ապահովագրության և վնասի հատուցման իրավունք, եթե դա նախատեսված է կամավորի հետ կնքված պայմանագրով.</p> <p>4) շաբաթական երկու հանգստյան օրվա՝ իրենց ընտրությամբ, եթե աշխատանքի տևողությունը յոթ օրից ավելի է.</p> <p>5) տարածելու իր կամավոր աշխատանքի մասին տեղեկություններ՝ բացառությամբ սույն օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ կետով նախատեսված դեպքերի.</p> <p>6) կազմակերպության հետ կնքելու կամավոր աշխատանքի պայմանագիր.</p> <p>7) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և կամավոր աշխատանքի պայմանագրով նախատեսված այլ իրավունքներ:</p> | <p>1) Անհրաժեշտ է հաշվի առնել մեկենասության, բարեգործության, բարերարության և կամավորության երկու տեսակ</p> <p>1.1. Երբ մեկենասը /կամավորը/ իր աշխատանքը չի կապում պետական, հասարակական կամ տարածքային կառույցի հետ և գործում է նրանց լիազորությունների սահմաններից դուրս,</p> <p>1.2. Երբ մեկենասը /կամավորը/ իր աշխատանքն իրականացնում է որևէ իրավաբանական անձի սոցիալ-հումանիտար, կազմակերպչական-տեղեկատվական ծրագրերի շրջանակներում, որն իրականացվում է տվյալ ծրագիրը կատարող որևէ իրավաբանական անձի կողմից:</p> <p>2) սույն հոդվածի 4-րդ կետը, ընդհանրապես անհասկանալի է, ինչ կապ ունեն 7 օրն ու հանգստյան օրերը և ընդհանրապես սույն հոդվածը ավելի շատ համապատասխանում է սանկցիաներին, քան կամավորությանը, պետք չէ սահմանափակել կամավորության կամ կամավոր աշխատանքը որևէ ժամկետով, սա անթույլատրելի է:</p> |
| <p>Հոդված 8. Կազմակերպության իրավունքները Կազմակերպությունն իրավունք ունի՝</p> <p>1) դիմելու և տեղեկություններ ստանալու</p> | <p>Իրավունքների վերաբերյալ, դարձյալ ցանկանում ենք վերահսկել և վարչարարություն անել: Չենք կարող հասկանալ, որ մեկենասությունը և կամավորությունը</p> |

| | |
|--|---|
| <p>պետական և տեղական ինքնակառավարման մարմիններից կամավոր աշխատանք կատարելու անհրաժեշտություն ունեցող բնագավառների և վայրերի մասին.</p> <p>2) սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված ոլորտներում աշխատանք իրականացնելու համար կամավորներ ներգրավելու.</p> <p>3) ստանալու տեղեկություններ կամավորի կողմից կատարված աշխատանքների մասին.</p> <p>4) պաշտպանել կազմակերպության կամավորների՝ կամավոր աշխատանքի հետ կապված օրինական իրավունքները և շահերը.</p> <p>5) կամավորներից ստանալու նրանց որակավորմանը վերաբերող փաստաթղթեր և այլ անձանց ներկայացնել կամավորների վերաբերյալ երաշխավորագրեր.</p> <p>6) կազմակերպել կամավոր աշխատանքներ պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ինչպես նաև ոչ առևտրային կազմակերպությունների և ֆիզիկական անձանց օգտին՝ նրանց համաձայնությամբ կնքելով համապատասխան պայմանագիր:</p> | <p>“խղճի կանչ է” և ոչ թե՝ ”պարտադրանք”:</p> <ol style="list-style-type: none"> 1. Մեկենասական, բարեգործական կամ կամավորական ծրագրերի մշակում՝ սոցիալական, հումանիտար կամ այլ խնդիրների բավարարման կամ լուծման ուղղությամբ: 2. Ընդունող կազմակերպության կողմից կամավորների վրա դրված կամավորական պարտականությունների իրականացման ժամանակ կատարված ծախսերի փոխհատուցում՝ ըստ կնքված պայմանագրի: 3. Հաշվի առնել կամավորի կարծիքը, որը ներգրավված է տվյալ աշխատանքի կատարմանը: 4. Կամավորի վրա դրված պարտականությունները կատարելիս, եթե կամավորի հետ դժբախտ դեպք է տեղի ունեցել, ապա ընդունող կազմակերպությունը պետք է փոխհատուցում վճարի: 5. Եթե 4-րդ կետով սահմանել ենք պաշտպանել կազմակերպության կամավորների՝ կամավոր աշխատանքի հետ կապված օրինական իրավունքներն ու շահերը, ապա ինչու՞ չենք նշում որտե՞ղ և ինչպե՞ս, մասնավորապես դատական կարգով ինչպես ենք այն իրականացնելու, եթե օրինակ <Հասարակական կազմակերպությունների մասին> ՀՀ օրենքով հասարակական կազմակերպություններին, որոնք ավելի շահագրգռված են սույն օրենքի ընդունմամբ, այլոց իրավունքներն ու շահերը դատական կարգով պաշտպանելու իրավունք տրված չէ: |
| <p>Հոդված 9. Կամավորի պարտականությունները Կամավորը պարտավոր է՝</p> <ol style="list-style-type: none"> 1) կամավոր աշխատանք կատարել սույն օրենքով ամրագրված սկզբունքներին և կամավոր աշխատանքի պայմանագրին համապատասխան. 2) չտարածել կամավոր աշխատանք իրականացնելու ընթացքում մարդու կյանքի և առողջության մասին իրեն հայտնի դարձած, ինչպես նաև կամավոր աշխատանքի պայմանագրով նախատեսված այլ տեղեկություններ. 3) նպատակային օգտագործել կազմակերպության հատկացրած միջոցները. 4) պահպանել կազմակերպության ներքին կարգապահական կանոնները. 5) պահպանել տեխնիկայի անվտանգության կանոնները. 6) իր աշխատանքի հետևանքով պատճառված նյութական վնասը հատուցել լրիվ ծավալով, եթե առկա է իր մեղքը. <p>Հոդված 10. Կազմակերպության պարտականությունները</p> <ol style="list-style-type: none"> 1. Կազմակերպությունը պարտավոր է՝ <ol style="list-style-type: none"> 1) ստեղծել կամավոր աշխատանքի կատարման համար անհրաժեշտ պայմաններ. 2) կամավորին հատուցել կամավոր աշխատանք իրականացնելու հետ կապված օրենսդրությամբ սահմանված գործուղման, | <ol style="list-style-type: none"> 1. Պարզ չէ, թե ինչու պետք է սահմանափակել կամավորի աշխատանքի ժամկետը: 2. Կազմակերպությունը պետք է ժամանակավոր վկայական տրամադրի, ինչպես նաև աշխատանքային սերտիֆիկատ՝ կատարած կամավոր աշխատանքի վերաբերյալ: 3. Կազմակերպությունը պետք է ուսուցում իրականացնի կամավորի արհեստավարժության բարձրացման ուղղությամբ: 4. Ընդունող կազմակերպությունը կամավորի աշխատանքի ավարտին նրան պետք է համապատասխան երաշխավորագիր տրամադրի: 5. Օրենքի նախագծում նշված չէ նաև հասարակական կազմակերպություններում ընդգրկված կամավորը՝ իր կամավոր աշխատանք կատարելու ժամանակահատվածում համարվում է այդ կազմակերպության անդամ, թե՛ ոչ: Քանի որ այդ երկու հասկացությունները /անդամ և կամավոր/ տարբերվում են միմյանցից: Օրինակ հասարակական կազմակերպությունների նախագահները և իրենց վարչության անդամները կամ մյուս անդամները աշխատում են անվարձաձեռնույց, այսինքն օրենքով չեն վճարվում, նրանք աշխատում են կամավոր հիմունքներով և ունեն կամավորի կարգավիճակ: Այս երկու կարգավիճակների տարբերությունը պետք է իր արտացոլումը գտնի սույն օրենքում կամ <Հասարակական կազմակերպությունների մասին> ՀՀ օրենքում: |

| | |
|--|---|
| <p>ինչպես նաև այլ հիմնավորված ծախսերը.</p> <p>3) ապահովել կամավորների աշխատանքի անվտանգության պահպանման նորմերը, մինչև կամավորի աշխատանքի անցնելը կամավորների հետ անցկացնել տեխնիկայի անվտանգության կանոնների և կատարվող աշխատանքների առանձնահատկությունների վերաբերյալ հրահանգավորում.</p> <p>4) կազմակերպության միջոցների հաշվին ապահովել կամավորի պարտադիր բժշկական հետազոտությունը, եթե կամավորը կատարում է այնպիսի աշխատանքներ, որոնց իրականացման համար նման հետազոտության պահանջը սահմանվում է օրենսդրությամբ.</p> <p>5) կամավորի հետ կնքել պայմանագիր, եթե կամավոր աշխատանքը գերազանցում է յոթ օրացուցային օրը.</p> <p>6) վերահսկել կամավորների աշխատանքը.</p> <p>7) իրականացնել Հայաստանի Հանրապետության օրենքներով և կամավորի հետ կնքված պայմանագրով նախատեսված այլ պարտականություններ:</p> | |
| <p>Հոդված 11. Կամավոր աշխատանքի պայմանագրի հասկացությունը և կողմերը.</p> <p>1. Կամավոր աշխատանքի պայմանագիրը համաձայնություն է կամավորի և կազմակերպության միջև կամավոր աշխատանքներ կատարելու մասին, որը կնքվում է որոշակի ժամկետով, և որի հիման վրա կամավորն իր կամքով, առանց վարձատրության իրականացնում է կամավոր աշխատանք:</p> <p>2. Կամավորի աշխատանքի պայմանագիրը կնքվում է գրավոր, բացառությամբ յոթ օրը չգերազանցող աշխատանքների դեպքում: Յոթ օրը չգերազանցող աշխատանքներում ընդգրկված կամավորների համար կազմակերպությունը վարում է կամավորների հաշվառման մատյան:</p> <p>3. Տասնչորսից մինչև տասնվեց տարեկան կամավորներն իրավունք ունեն ընդգրկվել կամավոր աշխատանքներում միայն ծնողներից մեկի, որդեգրողի կամ հոգաբարձուի համաձայնությամբ:</p> | <p>1. Որոշ դեպքերում կամավորական աշխատանքի կատարման պայմանագիրը պետք է ստորագրվի նաև երրորդ անձի կողմից, որը որոշակի օգուտ է ստանում տվյալ աշխատանքից (հիվանդների, ծերերի և սահմանափակ հնարավորություններով անձանց խնամք):</p> <p>2. Կամավորներին ընդունող կազմակերպությունը պարտավոր է մինչև կամավորի հետ պայմանագիր կնքելը մանրակրկիտ ձևով նախապատրաստել նրան կամավոր կատարվող աշխատանքի ձևին ու ծավալին և որոշել պրոֆեսիոնալ դասակարգումն ու նրա բարոյահոգեբանական սկզբունքները:</p> <p>3. Ինչպես նշել եմ կամավորության համար պետք չէ ժամկետ դնել կամ կամավորական աշխատանքը ժամկետով սահմանափակել:</p> |
| <p>Հոդված 12. Կամավորի հետ կնքվող պայմանագրի բովանդակությունը</p> <p>1. Կամավորի հետ կնքվող պայմանագրում նշվում են՝</p> <p>1) պայմանագրի կնքող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության անունից պայմանագիրը ստորագրող անձի պաշտոնը, անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը.</p> <p>2) կամավորի անունը, ազգանունը, նրա ցանկությամբ՝ նաև հայրանունը, ծննդյան</p> | <p>1. Ամենակարևորը, պայմանագրում չեն տրվում պարտականությունները (գործառույթները), որոնք պետք է կատարի կամավորը:</p> <p>2. Չի նշվում, թե ինչ պրոֆեսիոնալ նախապատրաստություն պետք է անցնի կամավորը կազմակերպությունում:</p> |

| | |
|---|--|
| <p>տարին, ամիսը, ամսաթիվը, բնակության վայրը.</p> <p>3) կամավորի անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները,</p> <p>4) պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը.</p> <p>5) աշխատանքը սկսելու տարին, ամիսը, ամսաթիվը.</p> <p>6) կամավորի պաշտոնի անվանումը և /կամ/ գործառույթները, աշխատանք կատարելու հետ կապված հնարավոր ռիսկը, կատարելու վայրը.</p> <p>7) պայմանագրի գործողության ժամկետները, աշխատաժամանակի տևողությունը օրվա ընթացքում.</p> <p>8) կամավոր աշխատանքն իրականացնելու կարգը և պայմանները:</p> <p>2. Անհրաժեշտության դեպքում պայմանագրում պետք է նշվի նաև կանխարգելիչ պատվաստումների և (կամ) քիմիական կանխարգելման մասին:</p> | |
| <p>Հոդված 13. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ առևտրային կազմակերպությունների օգտին կամավոր աշխատանքի կազմակերպման պայմանագրի բովանդակությունը</p> <p>1. Պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, ոչ առևտրային կազմակերպությունների (այսուհետ՝ ընդունող կազմակերպություն) օգտին կամավոր աշխատանքի կազմակերպման պայմանագրում պետք է նշվեն ընդունող կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կազմակերպության անվանումը, գտնվելու վայրը, կամավոր աշխատանքների կատարման առարկան, կատարման ժամկետները, կատարման վայրը, կամավորների թիվը, աշխատաժամանակի տևողությունը:</p> <p>2. Սույն հոդվածի 1-ին մասում սահմանված պայմանագրում նշվում է նաև կամավորների կյանքին կամ առողջությանը վտանգ ներկայացնող ռիսկերը վերացնելու կամ նվազեցնելու վերաբերյալ ընդունող կազմակերպության պարտավորությունը:</p> <p>3. Կողմերի նախաձեռնությամբ պայմանագրով կարող են սահմանվել սույն օրենքին չհակասող այլ պայմաններ:</p> | <p>1. Չի նախատեսված կամավորի կողմից անկանխատեսելի ծախսերի փոխհատուցում:</p> <p>2. Բացակայում է կամավորի աշխատանքի պայմանների երաշխավորության համաձայնեցման հարցը:</p> <p>3. Անհրաժեշտ է տվյալ ոլորտում կամավոր աշխատանքի սերտիֆիկատ տալ, որը հաստատում է պրոֆեսիոնալ նախապատրաստական անցկացումը:</p> <p>4. Նշել աշխատանքի բնույթը և ձևը:</p> |
| <p>Հոդված 14. Կամավոր աշխատանք կատարելու ժամկետները</p> <p>1. Օրացուցային տարվա ընթացքում յուրաքանչյուր անձ կամավոր աշխատանքի կարող է ներգրավվել վեց ամսից ոչ ավելի տևողությամբ:</p> <p>2. Վեց ամսից ավելի ժամանակով կատարված աշխատանքը կամավոր աշխատանք չի համարվում, բացառությամբ Հայաստանի</p> | <p>1. Բնչո՞ւ են սահմանափակվում կամավորական աշխատանքի ժամկետները, չէ՞ որ հասարակական կազմակերպություններն իրենց բնույթով և իր անդամների հետ միասին իրականացնում են կամավոր աշխատանք:</p> <p>2. Եթե պետությանը մտահոգում է, որ կամավորական աշխատանքը կնպաստի «սովերային» տնտեսության ստեղծմանը, ապա տվյալ դեպքում կան պայմաններ, որոնց դեպքում կամավորական աշխատանքը չի վճարվում, և կամավորական աշխատանքը հաշվի չի</p> |

| | |
|---|--|
| <p>Հանրապետության միջազգային պայմանագրերով սահմանված դեպքերի:</p> | <p>առնվում աշխատանքային ստաժում:</p> |
| <p>Հոդված 15. Կամավոր աշխատանքի պայմանագիրը փոփոխելու և դադարեցնելու հիմքերը և կարգը. 1. Կամավոր աշխատանքի պայմանագիրը կարող է փոփոխվել կողմերի համաձայնությամբ: 2. Կամավոր աշխատանքի պայմանագիրը կարող է լուծվել կողմերից յուրաքանչյուրի նախաձեռնությամբ:</p> | <p>1. Որոշակի դեպքերում ծագող խնդիրները կարելի է լուծել միջնորդ դատարանի միջոցով, եթե նշված է պայմանագրում, կամ դատական կարգով: Չնայած, այս դրույթը օրենքում պետք չէ նշել, այս մասին պետք է նշել միայն կամավորի հետ կնքվող պայմանագրում, սա պայմանագրային դրույթ է:</p> |
| <p>Հոդված 16. Յոթ օրը չգերազանցող աշխատանքներում ընդգրկված կամավորների հաշվառումը 1. Յոթ օրը չգերազանցող աշխատանքներում ընդգրկված կամավորների համար կազմակերպությունը վարում է կամավորների հաշվառման մատյան: 2. Կամավորների հաշվառման մատյանի ձևը և վարման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը: 3. Հաշվառման մատյանը պետք է պարունակի հետևյալ տեղեկությունները՝ 1) գրանցման հերթական համարը. 2) կամավորի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը, ամսաթիվը, բնակության վայրը. 3) անձը հաստատող փաստաթղթի վավերապայմանները. 4) տվյալ կազմակերպությունում կամավոր աշխատանքի սկիզբը և ավարտը (տարին, ամիսը, ամսաթիվը). 5) կամավոր աշխատանքի նպատակը և վայրը:</p> | <p>1. Մեկ անգամ ևս նշում եմ. ինչո՞ւ 7 օրից պակաս տևող կամավոր աշխատանքն առանձին բացատրություն է պահանջում: Ինչո՞ւ է պետությունը սահմանափակման սանկցիաներ մտցնում (7 օր, հանգստյան օրեր և այլն) կամավոր (մեկենասական) գործունեության վրա: 2. Ի՞նչ կապ ունեն պետական մարմինները և կամավորական աշխատանքը: 3. Այս կետը, ընդհանրապես, հայրենական բյուրոկրատական մտքի գլուխգործոցն է, ինչո՞ւ պետք է կամավորների հաշվառման մատյանի ձևը և վարման կարգը սահմանվի ՀՀ կառավարության կողմից, եթե ոչ կամավոր ընդունող կազմակերպության կողմից:</p> |
| <p>Հոդված 17 Կամավոր աշխատանքներին առանձին կատեգորիայի անձանց մասնակցության առանձնահատկությունները Կամավոր աշխատանքներին մինչև տասնութ տարեկան անձանց, հղի կամ մինչև մեկ տարեկան երեխա խնամող կամ երեխային կրծքով կերակրող կանանց մասնակցությունը կազմակերպվում է՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված սահմանափակումները:</p> | <p>Առանձին կատեգորիաների մեջ ինչո՞ւ չենք առանձնացրել հաշմանդամներին, չե՞որ նրանք նույնպես իրավունք ունեն կամավորությամբ զբաղվել:</p> |
| <p>Հոդված 18. Կամավոր աշխատանքների կազմակերպումը օտարերկրյա պետություններում և օտարերկրացի կամավորների աշխատանքը Հայաստանի Հանրապետությունում 1. Կազմակերպություններն իրավունք ունեն Հայաստանի Հանրապետության քաղաքացի հանդիսացող կամավորների մասնակցությամբ կամավոր աշխատանք իրականացնել օտարերկրյա պետություններում՝ օտարերկրյա պետության կամ միջազգային</p> | <p>1. Հետաքրքի՞ր է, երբ ՀՀ քաղաքացի հանդիսացող կամավորները, կամավոր աշխատանքի են ներգրավվում արտերկրում, ապա մեր Կառավարությունը ինչպես է հաստատում ներգրավող կազմակերպության Կանոնադրության մեջ համապատասխան կետի առկայության փաստը: 2. Իսկ օտարերկրացի հանդիսացող կամավորի ելքի ու մուտքի, ՀՀ-ում ապրելու և աշխատելու իրավունքի հարցերն ի՞նչ կարգով են որոշվելու, ինչո՞ւ ՀՀ ոստիկանությանն ու ՀՀ ազգային անվտանգության պետական ծառայությանը չի ներկայացվել սույն նախագիծը և չի ստացվել նրանց կարծիքներն ու</p> |

| | |
|---|--|
| <p>կազմակերպությունների հրավերով:</p> <p>2. Օտարերկրյա պետություններում կամավոր աշխատանքների կատարումը կարգավորվում է ընդունող պետության օրենսդրությանը համապատասխան և Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով:</p> <p>3. Կազմակերպություններն իրավունք ունեն հրավիրել օտարերկրացի կամավորներ՝ Հայաստանի տարածքում սույն օրենքով սահմանված կարգով կամավոր աշխատանք իրականացնելու նպատակով:</p> <p>4. Սույն հոդվածի 1-ին և 3-րդ մասերով սահմանված դեպքերում կամավորի գործուղման, ինչպես նաև այլ հիմնավորված ծախսերի հատուցումը իրականացվում է կազմակերպության կամ օտարերկրյա պետության կամ միջազգային կազմակերպության միջոցների հաշվին:</p> | <p>դիտողությունները:</p> <p>3. Այս գլուխը պետք է կազմվել գրագետ և կշռադատված, ելնելով նաև մեր պետության անվտանգության և ազգային շահերից:</p> |
| <p>Գլուխ 5. Վեճերի լուծումը և պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար</p> <p>Հոդված 19. Վեճերի լուծումը և պատասխանատվությունը սույն օրենքի պահանջները խախտելու համար</p> <p>1. Սույն օրենքի կիրառման հետ կապված վեճերը լուծվում են դատական կարգով:</p> <p>2. Սույն օրենքի պահանջները խախտող անձինք կրում են պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:</p> | <p>Ինչու՞ միայն դատական կարգով, այս դրույթը ավելի շատ պայմանագրում պետք է նշել, քան սույն օրենքում:</p> |
| <p>Հոդված 20. Սույն օրենքի ուժի մեջ մտնելը</p> <p>Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:</p> | |
| <p>Վերոնշյալի կապակցությամբ, ինչպես նաև նպատակահարմար գտնելով, ընդհանուր առմամբ փոխել քննարկվող՝ «Կամավոր աշխատանքի մասին» ՀՀ օրենքի գաղափարախոսությունն այնպիսի հասարակական երևույթների կանոնակարգմամբ, ինչպիսիք են կամավորությունը, մեկենասությունը և բարեգործությունը, առաջարկում ենք ապագա Օրենքի նախագծի ստորև կառուցվածքը.</p> <p>Անվանումը՝ «Կամավորության, մեկենասության և բարեգործության մասին» ՀՀ օրենք</p> <p>Բովանդակություն</p> <p>Հոդված 1. Օրենքի կարգավորման առարկան</p> <p>Հոդված 2. Օրենքում կիրառվող հիմնական հասկացությունները</p> <p>Հոդված 3. Կամավորության, մեկենասության և բարեգործության իրավական հիմքերը</p> <p>Հոդված 4. Կամավորության, մեկենասության և բարեգործության սկզբունքները</p> <p>Հոդված 5. Կամավորի, մեկենասի և բարեգործի կարգավիճակը</p> <p>Հոդված 6. Կամավորի, մեկենասի և բարեգործի գործառույթները</p> <p>Հոդված 7. Կամավորի, մեկենասի և բարեգործի իրավունքներն ու պարտականությունները</p> <p>Հոդված 8. Կամավորության, մեկենասության և բարեգործության նպատակը</p> <p>Հոդված 9. Կամավորության, մեկենասության և բարեգործության հիմնական տեսակները</p> <p>Հոդված 10. Կամավորության, մեկենասության և բարեգործության ոլորտում պետության դերն ու փոխհարաբերությունը</p> <p>Հոդված 11. Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների աջակցությունը կամավորության, մեկենասության և բարեգործության գործունեությանը</p> | |

Հոդված 12. Օտարերկրյա քաղաքացիների կամավորական, մեկենասական և բարեգործական գործունեությունը Հայաստանի Հանրապետությունում
Հոդված 13. Անցումային դրույթներ և սույն Օրենքի ուժի մեջ մտնելը

Կատ. Մ. Խաչատրյան
<Ա. Դ. Սախարովի անվ. մարդու իրավունքների պաշտպանության հայկական կենտրոն> ՀԿ իրավաբան